ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

28 հոկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

154
(2634)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 122

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության երեկվա՝ հոկտեմբերի 27-ի նիստի ժամանակ հայտնեց, թե գործադիրը մետրոյի նոր՝ «Աջափնյակ» կայարանը կառուցելու գործընթացի համար մրցույթ է հայտարարել: «Նախագծման աշխատանքներն արդեն ընթացքի մեջ են, առաջին փուլն ավարտում ենք ու, ըստ նախատեսվածի, 2023 թվականի վերջում կունենանք պատրաստի նախագիծ եւ հնարավորություն կունենանք շինարարության մրցույթ հայտարարելու», - ասաց Փաշինյանն ու վստահեցրեց՝ արդեն 2024-ին հնարավոր կլինի սկսել մետրոյի նոր կայարանի շինարարական աշխատանքները:

Փաշինյանի իշխանությունը, որ պատեհ ու անպատեհ առիթներով հաճախ է մետրոյի նոր կայարան կառուցելու մասին խոսում, այդպես էլ ժամկետ չի հայտնում, թե նոր կայարանն ի վերջո երբ պատրաստ կլինի:

«Ժողովուրդ» օրաթերթը մի քանի տարի հետ է գնացել ու վերհիշել՝ ինչպես էր 2017-ին դեռ այն ժամանակ ընդդիմադիր պատգամավոր, Երեւանի ընտրություններին մասնակցող «Ելք» դաշինքի քաղաքապետի թեկնածու Փաշինյանը Facebook-յան ուղիղ եթեր մտնում մետրոպոլիտենի՝ «Աջափնյակ» կիսակառույց կայարանի մոտից ու հայտարարում. «Եթե ձեր քվեն տաք «Ելք» դաշինքին, ապա մենք խոստանում ենք, որ մինչեւ 2022 թվականը Երեւան քաղաքում մետրոյի առնվազն մեկ կայարան կավելանա: Ինչպես հասկանում ենք, ամենահիրատեսականն այս պահին «Աջափնյակ» կայարանն է»:

Վերոնշյալ խոստումը նա 2017-ի մայիսի 5-ին է տվել, բայց խոստումը՝ խոստում, իսկ փաստն այն է, որ դրանից ավելի քան 5 տարի անց ոչ միայն քաղաքային, այլ նաեւ ամբողջ երկրի իշխանությունն է իր ու իր քաղաքական թիմի ձեռքում, սակայն երեւանյան մետրոպոլիտենում որեւէ նոր կայարան չի բացվել: Փաշինյանը նորի՛ց է խաբել:

Հայաստանի իշխանությունները խիստ գաղտնի են պահում «Մանկական Եվրատեսիլ» միջազգային մրցույթին հատկացվելիք գումարի չափը, ասես ռազմական գաղտնիք լինի: Այս ընթացքում դեռ ոչ մի պետական կառույց չի խոսել, թե որքան գումար է ծախսվելու պետական բյուջեից այդ մրցույթի անցկացման համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Մանկական Եվրատեսիլ» միջազգային մրցույթի կազմակերպման համար հատկացված ֆինանսական հատվածը վերահսկվելու է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի ու իր տեղակալ Բագրատ Բադալյանի կողմից: Խոսքը ԱՄՆ-ում մոտ 600.000 դոլարով տուն գնած Բագրատ Բադալյանի մասին է: Պարզվում է՝ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ֆինանսական հատվածի հետ կապված գրեթե 0 դերակատարություն ունի: Ի դեպ, այս մասին հարցում «Ժողովուրդ» օրաթերթն օրեր առաջ ուղարկել է նաեւ ՀՀ կառավարություն, սակայն դեռ պատասխան չունենք: Երեկ կառավարության լրատվականից մեզ փոխանցեցին, որ մեր հարցումը վերահասցեագրել են պետական մյուս կառույցներին, որոնք քիչ թե շատ դերակատարություն ունեն այս մրցույթի անցկացման գործում: Մինչ այս «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարեսկզբին կառավարությունը գումար էր հատկացրել Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը մարզահամերգային համալիրում բռնցքամարտի Եվրոպայի առաջնության միջոցառումը, «Մանկական Եվրատեսիլ»-ը, գիտության եւ արվեստի STARMUS 6-րդ փառատոնը, Ծանրամարտի եվրոպայի առաջնությունն անցկացնելու նպատակով: Օրինակ՝ համալիրի մոդուլային շարժական հատակի ձեռքբերման նպատակով հատկացվել էր 170 մլն 520 հազար դրամ, 60 մլն դրամ՝ ինֆորմացիոն լուսադիոդային (LED) ցուցատախտակի ձեռքբերման համար, իսկ, ահա, հանդերձարանների եւ միջանցքի վերանորոգման համար հատկացված գումարը կազմել է 42 մլն դրամ, փոխարինման ենթակա երկու վերելակի ձեռքբերման նպատակով 22 մլն 800 հազար դրամ է հատկացվել: Տեղեկացնենք, որ այս տարվա դեկտեմբերին Հայաստանում անցկացվելու է «Մանկական Եվրատեսիլ - 2022» երգի միջազգային մրցույթը:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 26-ին մեկնել է Սամարղանդ՝ Ուզբեկստանի Հանրապետություն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ նախագահի ամբողջ պատվիրակությունն այնտեղ է մեկնել ՀՀ վարչապետին սպասարկող նախագահական ինքնաթիռով: Մեզ հետ զրույցում նրա մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը հաստատեց մեր ունեցած տեղեկությունը՝ ասելով. «Ժամանակի եւ լոգիստիկայի պատճառով ընտրվել է այդ եղանակով Սամարղանդ մեկնելու տարբերակը»: Հավելենք, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին ուղեկցում է 13 անձ, որից 5-ը՝ պատգամավոր: Պատվիրակության կազմում են ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, Պետական- իրավական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, պատգամավորներ Լիլիթ Մինասյանը, Ալեքսեյ Սանդիկովն ու Միքայել Թումասյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 5 անձի փաստացի կատարած ծախսերը հավաստող փաստաթղթերի վճարումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին, իսկ գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը: Տեղեկացնենք, որ նախագահական ինքնաթիռի ծախսը կազմում է մոտ 25 մլն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վաղը՝ հոկտեմբերի 29-ին, համաժողով կգումարի: Նկատենք՝ ի սկզբանե համաժողովը պետք է տեղի ունենար սեպտեմբերի 18-ին, սակայն հետաձգվեց Ադրբեջանի կողմից սեպտեմբերի 13-ին իրականացված հարձակման պատճառով. այն տեղի կունենա վաղը: Ինչպես հայտնի է, համաժողովի ընթացքում նախատեսված է ընտրել վարչության նոր կազմ, որն էլ կընտրի նախագահ: Արդեն հայտնի են վարչության անդամի 47 թեկնածուների անունները, որոնք կպայքարեն 21 տեղի համար: Թեկնածուների թվում են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատգամավորներ, Էդուարդ Աղաջանյանը, Ռուստամ Բաքոյանը, Սիսակ Գաբրիելյանը, Վիլեն Գաբրիելյանը, Արման Եղոյանը, Հայկ Կոնջորյանը, կուսակցության վարչության անդամ Տիգրան Ավինյանը: Ըստ կուսակցության կանոնադրության՝ վարչության անդամներն ընտրվում են համաժողովի կողմից վարկանիշային քվեարկությամբ առավելագույնը երեք տարի ժամկետով: Այնուհետեւ վարչությունն իր միջից պետք է ընտրի նախագահ: Այդ պաշտոնի հիմնական հավակնորդները երկուսն են՝ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը եւ Երեւանի քաղաքապետի տեղակալ եւ այդ պաշտոնին հավակնող Տիգրան Ավինյանը: Հավելենք, որ իշխող կուսակցության համաժողովը տեղի կունենա Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

# ՀԵՐԹԱԿԱՆ ԹՂԹԻ ԿՏՈՐՆ Է ԼԻՆԵԼՈՒ

**«Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա զրուցակիցը «Միացյալ Հայաստան» կուսակցության վարչության անդամ Վարդան Այվազյանն է:**

**-Պարոն Այվազյան, վերջերս հայ հասարակության շրջանում շրջանառվող հիմնական թեզերից մեկը Ադրբեջանի հետ «խաղաղության պայմանագիր» կնքնելն է: Եթե հարցին իրավական ու սահմանադրական իրավունքի տեսանկյունից մոտենանք, ապա հետագա ի՞նչ գործընթացներ է բերելու կամ ենթադրելու դրա կնքումը:**

-Շնորհակալություն հարցն այդպես ձեւակերպելու ու խնդիրը Սահմանադրության տեսանկյունից վերլուծելու համար: Ինչու՝ որովհետեւ եթե Սահմանադրության ու իրավունքի տեսանկյունից ենք դիտարկում պետությունների միջեւ կնքվող նմանատիպ փաստաթղթերը, ապա, ըստ էության, պետք է իրավունքի գերակայությամբ առաջնորդվենք, այսինքն՝ նմանատիպ փաստաթուղթը մեզ ամբողջովին ու իրապես պետք է խաղաղությամբ ապահովի: Սա՝ իրավաբանական տեսանկյունից, իսկ եթե փաստացի տեսանկյունից դիտարկենք փաստաթուղթը, ապա պետք է արձանագրել, որ այժմ միջազգային իրավունք պարզապես գոյություն չունի: Եվ դա գոյություն չունի համաշխարհային երկրորդ պատերազմից ու առավելապես 1990-ականներից ի վեր, երբ երկբեւեռ աշխարահակարգը փլուզվեց ու դարձավ միաբեւեռ: Հենց այդ ժամանակ էլ միջազգային իրավունքի հուղարկավորության սկիզբը դրվեց:

«Խաղաղության պայմանագիր» կոչվածին մեր հասարակությունը լուրջ չպետք է վերաբերվի, որովհետեւ ինչ տարբերակով էլ որ այն կնքվի, համոզված եմ՝ կենսունակ չի լինելու: Այսօր պետությունների վարքագիծն ու աշխարհի աշխարհակարգը փաստացի ցույց են տալիս, որ մոլորակի վրա ժամ առ ժամ, ցանկացած պահի քաղաքական իրավիճակ է փոխվում: Բացի այդ, եթե «խաղաղության պայմանագիր» է կնքվում հաղթած ու պարտված պետությունների միջեւ, ապա պարտված պետությունների համար դա կապիտուլիացիայի պայմանագիր է դառնում: Եվ եթե այն ստորագրվի, ապա լրջություն չի ունենալու, ավելին՝ մեր ժողովրդի, պետության համար խաղաղության ու անվտանգության երաշխիքներ չի ապահովելու: Այսինքն՝ դա հերթական թղթի կտորն է լինելու:

**-Պատերազմից հետո մեր հասարակության շրջանում մեկ այլ եզրույթ էլ է շրջանառվում ու քննարկվում. Ադրբեջանին Հայաստանով դեպի Նախիջեւան «միջանցք» տրամադրելու մասին է խոսքը:**

**Իհարկե, այդ թեզն Ադրբեջանն է հրապարակ նետել, բայց այժմ էլ թեեւ հայաստանյան իշխանությունները վստահեցնում են՝ որեւէ «միջանցք» չեն տրամադրելու, թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան պնդում են՝ եթե Հայաստանն իր կամքը «միջանցք» չտա, ապա նրանք դա բռունցքով են վերցնելու: Իրավական տեսանկյունից ի՞նչ ասել է «միջանցքի» տրամադրում:**

-Ադրբեջանցիների պատկերացրած բաղձալի «միջանցքը» նրանք պատկերացնում են բացառապես իրենց վերահսկողության ներքո, բայց մեր Սահմանադրությունը հստակ է սահմանում. այն, ինչ վերաբերում է մեր պետության ու պետական սահմանների փոփոխությանը, ապա դա չի կարող վարչապետի կամ ինչ-որ մի խմբակի քմահաճույքով որոշվել: Իրավական տեսակետից նման հարցը հանրաքվեով ու ժողովրդի կամքով է որոշվում: Լեգիտիմության տեսանկյունից միայն այս կերպով կարող է միջանցք տրամադրվել: Այս պահին կարծես Ռուսաստանին են մեղադրում «միջանցք» տրամադրելու մեջ, բայց Ռուսաստանը տարբեր պաշտոնյաների շուրթերով հայտարարում է, որ նման օրակարգ գոյություն չունի, նման խոսակցություն չկա: Արեւմուտքը նույնպես վստահեցնում է, թե «միջանցք» չի կարող տրամադրվել, բայց այս ամենը թե՛ գերտերությունների, թե՛ նաեւ մեր իշխանությունների կողմից մանիպուլյացիաներ են, որ որեւէ կերպով ընդհանուր աղերս չունեն սահմանադրական ու իրավական կարագավորումների հետ: Ցավոք, այսօր իրերի դասավորությունն այնպիսին է, որ ինչպես գլոբալ, այնպես էլ ներպետական քաղաքականությունը պետք է իրավունքից բխի: Այսինքն՝ ցանկացած շարժ չպետք է հակասի իրավունքին, բայց, ցավոք, մեր օրերում իրավունքն են փորձում քաղաքականության հարմարեցնել: Դրա վառ օրինակն այն է, որ միջազգային իրավունքը փոխակերպվել է գերտերությունների կողմից թելադրվող կանոններով, իսկ կանոններն իրավունք լինել պարզապես չեն կարող: «Միջանցքի» տրամաբանությունից ու նմանատիպ խոսակցություններից զերծ լինելու համար իշխանություններն առնվազն պետք է կարողանան, ունակ լինեն կոնսոլիդացնել հասարակությանը, նրանց միեւնույն արժեհամակարգին, հայրենասիրական ընկալմանը բերել, որպեսզի կարողանան անառիկ պահել մեր երկրի տարածքային ամբողջականությունը: Ես այսօր խիստ կասկածում եմ, որ հայաստանյան իշխանություններն ունակ են համընդհանուր կոնսոլիդացիա իրականացնել:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

## ՎԱՐԿ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Արցախի Հանրապետության կառավարությանը կտրամադրվի 20 մլրդ դրամ գումարի չափով միջպետական վարկ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդ գումարով տեղահանված բնակիչների համար Լեռնային Ղարաբաղի տարածքում բնակելի տներ են կառուցվելու եւ կահավորվելու, ինչպես նաեւ բանկերի հանդեպ ունեցած պարտավորությունների ֆինանսավորման համար է:

Պարզվում է, որ ԼՂՀ ֆինանսների նախարարը 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղին միջպետական վարկի գումարը 20 մրդ դրամով ավելացնելու վերաբերյալ գրություն է ուղարկել ՀՀ կառավարություն:

Մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ կառավարությունը նախատեսում է դեֆիցիտի ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներից տրամադրել միջպետական վարկ Լեռնային Ղարաբաղին 20 մլրդ դրամի չափով:

Ի դեպ, տեղեկացնենք, որ նախատեսված 20 մլրդ դրամ միջպետական վարկը Արցախի Հանրապետության կառավարությանը տրամադրվելու է տարեկան 0,01 տոկոս տոկոսադրույքով, մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը մարման ժամկետով: Բացի այս, միջպետական վարկի տրամադրումն իրականացվելու է առանց ապահովման միջոցի:

## ԲՆԱԿԱՐԱՆ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

Ռազմաուսումնական հաստատություն ավարտած եւ ՀՀ ՊՆ համակարգում կամ ԱԱԾ սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կհատկացվի:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս մասին որոշման նախագիծն ընդգրկված է ՀՀ կառավարության այսօրվա նիստում եւ չզեկուցվող հարցերի շարքում է:

Նշենք, որ որոշման այս նախագծի ընդունումը պետական բյուջեում առաջացնելու է լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն, որի տարեկան չափը կարող է կազմել ավելի քան 12,5 մլրդ դրամ: Մեզ հայտնի դարձավ, որ մինչեւ բնակարանների հատկացումը անցկացվելու է վիճակահանություն: Բացի այս, հատկացվող բնակարանների նկատմամբ զինծառայողների գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու է ՀՀ պաշտպանության նախարարության միջոցների հաշվին:

ԱՐԳԵԼՔ

# ՄՈՍԿՎԱՆ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻՆ

**Մոսկվան տարակուսանքով ընդունեց Կոնստանտին Զատուլինի եւ Մարգարիտա Սիմոնյանի՝ Հայաստան մուտքի արգելքի մասին տեղեկությունը: Այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:**

«Մենք նման հայտարարությունները տարակուսանքով ընդունեցինք: Հիշեցնեմ, որ խոսքը ՌԴ Պետդումայի պատգամավորի եւ ռուսական լրատվամիջոցի գլխավոր խմբագրի մասին է: Դիվանագիտական խողովակներով մենք անմիջապես դիմեցինք հայկական կողմին՝ պաշտոնական հաստատման եւ պարզաբանման համար: Մենք ելնում ենք նրանից, որ, եւս մեկ անգամ ընդգծեմ, եթե այս տեղեկությունը հաստատվի, դժվար է որակել որպես մեր հարաբերությունների դաշնակցային բնույթին համապատասխան բարեկամական քայլ: Երբ Երեւանից պաշտոնական պատասխան ստանանք, այդ ժամանակ կորոշենք հետագա գործողությունները, արձագանքները եւ այլն»,- ասել է Զախարովան՝ հիշեցնելով, որ եւ՛ Զատուլինը, եւ՛ Սիմոնյանը կողմ են հայ-ռուսական դաշնակցային կապերի համակողմանի ամրապնդմանը:

«Այս հարցում կասկած լինել չի կարող: Ես նրանցից այլ հայտարարություններ չեմ լսել: Ես իսկապես չէի ցանկանա, որ արհեստական պատճառներ հորինվեն ներկա պայմաններում, երբ Արեւմուտքը նպատակաուղղված փորձում է ցնցել իրավիճակը Հարավային Կովկասում, սեպ խրել Մոսկվայի եւ Երեւանի հարաբերություններում»,- ասել է Զախարովան:

Հիշեցնենք, որ երեկ Armlur.am-ը անդրադարձել էր այս նյութին եւ ներկայացրել էր ՀՀ ԱԺ-ի կողմից ուղարկված նամակը՝ ուղղված Զատուլինին:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ՀԱՐՑԵՐ Է ԱՌԱՋԱՑՐԵԼ

«Հետք» առցանց պարբերականի հրապարակած «Արսեն Թորոսյանի ընտանիքի ձկնաբուծական նոր բիզնեսը» վերտառությամբ հրապարակմամբ դատախազությունը զբաղվում է:

ArmLur.am-ի հարցին, թե Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն արդյոք ուսումնասիրում է «Հետք»-ի հրապարակումը, դատախազի մամուլի քարտուղար Լուսինե Մարտիրոսյանն այսպես արձագանքեց. «Ուսումնասիրություն է իրականացվում»:

Հրապարակումը, նշենք, բազմաթիվ հարցեր է առաջացրել հասարակության մոտ, ինչին, հուսանք, Գլխավոր դատախազությունը պատշաճ պատասխաններ կտա:

## ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐ

Այսօր ՀԱՊԿ անդամները կքննարկեն Հայաստան ուղարկված առաքելության զեկույցն ու Հայաստանին օգնություն տրամադրելու համատեղ ջանքերը. ասված է կազմակերպության երեկվա տարածած հայտարարության մեջ:

«Հոկտեմբերի 28-ին տեսակապի միջոցով տեղի կունենա ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նիստը, որի ընթացքում նախատեսվում է քննարկել սեպտեմբերի 15-ին՝ հայ-ադրբեջանական սահմանի լարվածությունից հետո Հայաստան ուղարկված առաքելության աշխատանքի արդյունքները: Նախատեսվում է նաեւ քննարկել համատեղ ջանքեր՝ Հայաստանի Հանրապետությանը օգնություն տրամադրելու ուղղությամբ»,- նշում է ռազմական դաշինքը:

Պաշտոնական Երեւանը հրապարակավ քննադատում է ՀԱՊԿ-ին՝ ադրբեջանական ագրեսիային համարժեք չարձագանքելու, Հայաստանին ռազմական օգնություն չտրամադրելու համար:

Արձագանքելով այդ քննադատություններին՝ Ռուսաստանի արտգործնախարարը շաբաթներ առաջ՝ Հայաստանի արտգործնախարարի հետ հանդիպմանը, ասել էր, թե ՀԱՊԿ-ը պատրաստ է դիտորդներ ուղարկել հայ-ադրբեջանական սահման, եւ որ դրա համար անհրաժեշտ է միայն կազմակերպել Հավաքական անվտանգության խորհրդի նիստ, որտեղ այժմ նախագահում է Հայաստանը:

Առայժմ պաշտոնապես չի հաղորդվել՝ որ երկրներից են լինելու դիտորդները, եւ ինչ մանդատ կարող է ունենալ այդ առաքելությունը: Հայկական կողմը միայն նշել էր, թե ՀԱՊԿ-ից նախ քաղաքական արձագանք են ակնկալում: «Նախեւառաջ պետք է հստակ հասկանալ՝ որքանով է կազմակերպությունը ճանաչում իրավիճակը, որը կա, այն է՝ ագրեսիա Հայաստանի դեմ եւ ներխուժում Հայաստանի սուվերեն տարածք», -այս մասին փոխանցել էին Հայաստանի արտգործնախարարությունից:

ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԶԵՐԾ ԱՇԽԱՐՀ

# ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

**Ամերիկյան հեսազոտությունների հայկական կենտրոնի մասնագետները վերլուծական հոդված են պատրաստել այն մասին, թե արդյոք Միացյալ Նահանգները կարող է զենք վաճառել Հայաստանին: Հոդվածը կրճատումներով ներկայացնում ենք ստորեւ.**

«Այժմ Միացյալ Նահանգները զենքի արտահանմամբ աշխարհում առաջատարն է: ԱՄՆ-ն զենքի արտահանումը, 2012-2016 թթ. համեմատ, 2017-2021 թթ. մեծացրել է 14 %-ով՝ իր համաշխարհային մասնաբաժինը 32 %-ից հասցնելով 39 %-ի: ԱՄՆ-ի եւ մեծությամբ զենքի երկրորդ արտահանող Ռուսաստանի միջեւ զենքի վաճառքի ծավալների տարբերությունը զգալիորեն մեծացել է. եթե 2012-2016 թթ. երկու երկրների արտահանումների միջեւ տարբերությունը կազմում էր 34 %՝ հոգուտ ԱՄՆ-ի, ապա 2017-2021 թթ.՝ 108 %: 2017-2021 թթ. ԱՄՆ-ն սպառազինություն է մատակարարել 103 երկրների:

Միացյալ Նահանգների 37-րդ նախագահ Ռիչարդ Նիքսոնի օրոք զենքի վաճառքը վերածվեց ԱՄՆ արտաքին քաղաքականության կարեւորագույն գործիքներից մեկի՝հիմք դնելով «Նիքսոնի դոկտրինին»: Ըստ այս դոկտրինի՝զենքի վաճառքը դիտարկվում էր որպես աշխարհում ազդեցությունը պահպանելու միջոց: Այդ դոկտրինի որդեգրումը պայմանավորված էր նրանով, որ Նիքսոնը անհանգստացած էր Վիետնամում ամերիկյան ներգրավվածությամբ, քանի որ նրա՝ նախագահի պաշտոնը ստանձնելու ժամանակ ԱՄՆ-ն արդեն 4 տարի ներգրավված էր Վիետնամի դեմ պատերազմում՝ տալով 25 հազար զոհ: Նպատակը, առանց ԱՄՆ համաշխարհային ազդեցության թուլացման, Վիետնամից ամերիկյան զորքերի աստիճանական դուրսբերումն էր, ինչպես նաեւ հետագայում այլ հակամարտություններում, առանց ԱՄՆ զորքերի օգտագործման, ամերիկյան ներկայության ապահովումը:

Միացյալ Նահանգների կողմից զենքի վաճառքը ներկայումս կարգավորվում է 1976 թ. «Ամերիկյան արտահանման վերահսկումների ակտի» միջոցով (ԱԱՎԱ, American Export Controls Act (AECA)): Այս ակտում սահմանվում է, որ Միացյալ Նահանգների նպատակը շարունակում է մնալ պատերազմներից եւ սպառազինության խնդիրներից զերծ աշխարհը, որտեղ ուժի կիրառումը ենթակա է օրենքի գերակայությանը, եւ միջազգային խնդիրները լուծվում են խաղաղ ճանապարհով: Ըստ այդմ, ակտով թույլատրվում է ԱՄՆ կառավարությանը զենք վաճառել բարեկամական երկրներին, որոնք ունեն բավարար միջոցներ՝ սպառազինելու իրենց ռազմական ուժերը կամ ստանձնելու ծախսերի մեծ մասը՝առանց իրենց տնտեսությունները չափազանց մեծ բեռի տակ դնելու: Այնուամենայնիվ, վաճառքի գործընթացը պետք է համապատասխանի ակտում նշված սահմանափակումներին եւ վերահսկման մեխանիզմներին, ԱՄՆ ազգային անվտանգության նպատակներին եւ ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին:

Բացի զենքի վաճառքի իրավական կարգավորումներից, կա նաեւ քաղաքական բաղադրիչ: ԱՄՆ զենքի վաճառքի քաղաքականությունը սահմանվում է որոշակի փաստաթղթով՝ «Սովորական սպառազինությունների փոխանցման քաղաքականություն» (Conventional Arms Transfer Policy), որը պարբերաբար թարմացվում է նախագահների կողմից: Ընդհանուր առմամբ լուրջ փոփոխություններ չեն կատարվում, սակայն կա այս կամ այն չափանիշի շեշտադրման տարբերություն: Այսպես, ի տարբերություն Նիքսոնի 1995 թ. քաղաքականության, Օբամայի 2014 թ. հրամանագրում մարդու իրավունքների եւ դրանց խախտումների վրա առավել մեծ շեշտադրում էր արվել, մասնավորապես՝ որպես չափորոշիչ նշվում էր, որ ստացող կողմը չպետք է սպառազինությունն օգտագործի մարդու իրավունքների դեմ ոտնձգության կամ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտելու կամ ահաբեկչության համար՝ դրանով իսկ կանխելով որեւէ ձեւով ԱՄՆ-ի ներքաշումը կամ ասոցացումը նման խախտումների հետ:

ԱՄՆ Կոնգրեսի դերը զենքի վաճառքի հարցում

ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքի գործընթացում հետաքրքրական է Կոնգրեսի դերը, որը կարող է արգելք կիրառել զենքի վաճառքի նկատմամբ ծանուցումից 30, իսկ ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների եւ Ավստրալիայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Իսրայելի, Նոր Զելանդիայի դեպքում՝ 15 օրվա ընթացքում: Կոնգրեսի կողմից նման լիազորությունների ձեռքբերումը պայմանավորված էր նրանով, որ նախկինում Նիքսոնի վարչակազմը միակողմանիորեն էր գործել այս հարցում, մասնավորապես՝ Իրան, Սաուդյան Արաբիա եւ Քուվեյթ զենքի փոխադրման ժամանակ: Դա հետեւեց 1974 թ. Կոնգրեսի կողմից «Օտարերկրյա աջակցության ակտի» Նելսոն-Բինգհեմի ուղղման ընդունմանը, որով նախագահը պարտավորվում էր տեղեկացնել Կոնգրեսին 25 մլն ԱՄՆ դոլարը գերազանցող զենքի վաճառքի մասին, որից հետո Կոնգրեսը սահմանված ժամկետում կարող էր բանաձեւով արգելափակել վաճառքը:

Ինչ վերաբերում է Հայաստանին ու Ադրբեջանին զենքի վաճառքի արգելքին, ապա նմանատիպ իրավական արգելք սահմանված էր 1993 թ. «Զենքերի միջազգային շրջանառության կարգավորումների» ակտի 126-րդ հոդվածի 1-ին կետով, որով Ադրբեջանն ու Հայաստանը ներառված էին այն երկրների ցանկում, որոնց արգելված էր զենք վաճառել: 126-րդ հոդվածի 1-ին կետը այնպիսի կարգավորում է, որն արգելում է որոշ երկրների համար զենքի եւ պաշտպանական ծառայությունների լիցենզիաների տրամադրումը: Այնուամենայնիվ, 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո այդ ցանկում կատարվում են լուրջ փոփոխություններ: Նախ՝ 2002 թ. դրանից դուրս են հանվում Տաջիկստանն ու Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը (Սերբիա, Մոնտենեգրո), իսկ 2003 թ.՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Այդուհետ Հայաստանին եւ Ադրբեջանին ԱՄՆ-ի կողմից զենքի վաճառքի յուրաքանչյուր հարց ենթակա է առանձին քննարկման եւ քննության:

Այսպիսով, իրավական առումով չկա խիստ սահմանափակում Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին զենքի վաճառքի հարցում:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանն ընդունել է Մոնպելիե քաղաքի Փաստաբանների պալատի նախագահ Նիկոլա Բըդել դե Բյուզաղեգին, ներկայացուցիչներ Լյուկ Կիղքյաշաղյանին, Ամին ֆաղաժին, Նաիրա Զորոյանին:

Պաշտպանն անդրադարձել է սեպտեմբերի 13-15-ը ՀՀ սուվերեն տարածքի վրա ադրբեջանական զինված ուժերի հարձակման հետեւանքներին, ներկայացրել իրավունքների շարունակական խախտումներն ու պատերազմական հանցագործությունները, որոնք արձանագրվել են Պաշտպանի արտահերթ զեկույցներում:

Գրիգորյանը խոսել է նաեւ Բաքվում հայ ռազմագերիների նկատմամբ իրականացվող դատավարությունների մասին՝ ընդգծելով, որ դրանք արհեստական են եւ ավելի շատ նպատակ ունեն ահաբեկելու թե՛ ընտանիքներին եւ թե՛ հայ հասարակությանը:

Մոնպելիե քաղաքի Փաստաբանների պալատի նախագահ Նիկոլա Բըդել դե Բյուզաղեգն իր հերթին շնորհակալություն է հայտնել Պաշտպանին ընդունելության համար՝ նշելով, որ շատ կարեւոր է տեղեկացված լինել Հայաստանում տեղի ունեցող իրավիճակի մասին եւ այն ներկայացնել աշխարհին:

## ԱՐՑԱԽԵՐԹ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետության խորհրդարանի քաղաքական բոլոր ուժերի նախաձեռնությամբ՝ հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին, տեղի կունենա Ազգային ժողովի արտահերթ նիստ եւ հանրահավաք՝նվիրված Արցախի Հանրապետության արժանապատիվ ու անվտանգ ապագային: Նիստն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվելու է Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում միաժամանակ հրավիրված մեծ հանրահավաքի առջեւ:

Նիստից անմիջապես հետո ելույթները կշարունակվեն Վերածննդի հրապարակում հրավիրված հանրահավաքում:

## ԱՌԱՋԻՆ ՊԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ԵՄ դիտորդները առաջին պարեկությունն են սկսել Ադրբեջանի հետ սահմանին: «Առաջիկա երկու ամսվա ընթացքում ԵՄ դիտորդական առաքելությունը իրավիճակի դիտարկումներ կիրականացնի հայ-ադրբեջանական սահմանի հայկական կողմում՝ նպաստելու վստահության ձեւավորմանը եւ սահմանային հարցերով հանձնաժողովների աշխատանքին»,- ասված է ԵՄ անվտանգության եւ պաշտպանության հարցերով ծառայության սոցիալական ցանցում:

## ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

# 3–ՐԴ ԴԱՏԱՎՈՐՆ Է ՓՈԽՎՈՒՄ

**Ռազգիլդեեւը կրկին դատարան չի ներկայացել. տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները դատարանից պահանջում են ռուսական 102-րդ ռազմաբազայի հրամանատարի նկատմամբ քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել ՀՀ գլխավոր դատախազություն, քանի որ նա խոչընդոտում է արդարադատության իրականացմանը:**

2018 թվականի դեկտեմբերի 2-ին Գյումրիում սպանված Ջուլիետա Ղուկասյանի գործով ամբաստանյալ, ռուսական 102-րդ ռազմաբազայի զինծառայող Ա. Ռազգիլդեեւը շարունակում է դատական նիստերին մասնակցել հեռավար՝ գտնելով ռուսական բազայի տարածքում: Չնայած Ջ. Ղուկասյանի իրավահաջորդի շահերը ներկայացնող ՀՔԱՎ նախագահ Արթուր Սաքունցն ու ՀՔԱՎ փաստաբան Հայկ Հակոբյանը, ինչպես նաեւ այդ շրջանում ներգրավված փաստաբան Արայիկ Ջալյանը բազմիցս հայտարարել էին, որ դատարանը դրանով խախտում է Քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, բայց դատավոր Ա. Ղուկասյանն ու Ն. Բեգլարյանը դա խախտում չէին համարում:

Ռազգիլդեեւին դատարան չներկայացնելու պատճառով Ջ. Ղուկասյանի իրավահաջորդի ներկայացուցիչները 2022 թ. ապրիլից դադարեցրել էին դատական նիստերին մասնակցությունը, մինչեւ չապահովվի Քրեական դատավարության օրենսգրքի դրույթների կատարումը:

Գործով վերջին դատական նիստը հոկտեմբերի 24-ին էր. գործի քննության ընթացքում արդեն 3-րդ անգամ գործը մակագրվել է նոր դատավորի, եւ նիստը նշանակվել էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Մարալիկի նստավայրում: Նոր դատավորի նշանակմամբ գործով դատաքննությունը վերսկսվում է, եւ դատական նիստերին ամբաստանյալի մասնակցությունը ապահովելու հարցը կրկին օրակարգում էր: Ռազմաբազայի հրամանատարությունն ու ինքը Ռազգիլդեեւը դատարանին միջնորդել էին՝ դատական նիստին մասնակցությունը կրկին տեսակապով կազմակերպելու հարցով. դատախազն ու պաշտպանը համակարծիք էին, որ տեսակապով եւս հնարավոր է ապահովել մասնակցությունը, մինչդեռ Ջ. Ղուկասյանի իրավահաջորդի շահերը ներկայացնող ՀՔԱՎ փաստաբան Հայկ Հակոբյանը առարկեց միջնորդության դեմ: Նա վերահաստատեց նախկինում արված հայտարարություններն այն մասին, որ ամբաստանյալին դատարան չներկայացնելը Քրեական դատավարության օրենսգրքի խախտում է. «Դատական քննությունը անցկացվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի՝ դատարան ներկայանալը պարտադիր է»:

Ուշագրավ է, որ ռազմաբազայի ղեկավարությունը դատավարության ողջ ընթացքում ռազգիլդեեւին դատարան չներկայացնելու տարբեր պատճառաբանություններ է ներկայացրել: Այսպես, 2020թ. հունիսի 18-ին ռազմաբազայի հրամանատարությունը դատարանին է դիմել դատական նիստը ռազմաբազայի տարածքում կամ հեռավար միանալու պայմանով անցկացնելու հարցով՝ վկայակոչելով երկրում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված վիճակը. «Դատավարության մասնակիցների եւ այլ անձանց անվտանգության ապահովման նպատակով առաջարկվում է դատական գործընթացն անցկացնել բազայի տարածքում տեսակապի միջոցների օգտագործմամբ»:

Իսկ նույն թվականի օգոստոսի 3-ին Ռազգիլդեեւի անունից միջնորդություն է ներկայացվել դատարան, որում, մասնավորապես, վկայակոչվել է համավարակն ու անվտանգության հարցերը եւ նշվել է. «Ես վախենում եմ իմ կյանքի եւ առողջության համար, գտնում եմ, որ իմ նկատմամբ քրեական գործը Շիրակի մարզի դատարանի շենքում քննելու դեպքում ամբողջությամբ չի ապահովվի իմ, վկաների, պահակախմբի կազմում ռուս զինծառայողների անվտանգությունը: Առավել անվտանգ կլինի գործը քննել բազայի տարածքում կամ տեսակապի ռեժիմով»:

Հետագայում ռազմաբազայի հրամանատարությունը պարբերաբար վերահաստատել է այս դիրքորոշումը տարբեր պատճառաբանություններով: Պատճառաբանությունների այս բազմաբազանությունն ու չհիմնավորված լինելը վկայում է այն մասին, որ ռազմաբազայի հրամանատարը բացարձակ կամայական ու անհարգալից վերաբերմունք է դրսեւորում Հայաստանի դատարանի հանդեպ: ՀՔԱՎ-ը նաեւ ՄԻԵԴ գանգատ է ներկայացրել այն հիմքով, որ պետությունը չի ապահովում կյանքի իրավունքի խախտման փաստի արդյունավետ քննությունը: Հայկ Հակոբյանը, ի պատասխան դատարանի հարցին, նշել է, որ սրանով խախտվում են տուժողի իրավահաջորդի արդար դատաքննության եւ իրավունքների եւ ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները, գործի արդարացի եւ ողջամիտ ժամկետում քննության իրավունքները, խախտվում են նաեւ մրցակցային դատավարության հիմքերը, կողմերի իրավահավասարությունը, եւ որ դատարանը պետք է միջոցներ ձեռնարկի քրեական գործով արդարադատության իրականացման խոչընդոտները վերացնելու, այն է՝ռուսական 102-րդ ռազմաբազայի հրամանատարի նկատմամբ քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել ՀՀ գլխավոր դատախազություն, քանի որ 102-րդ ռազմաբազայի հրամանատարի իրավախախտ վարքագծի (դատարանի օրինական պահանջը չկատարելը՝ ամբաստանյալին դատարան ներկայացնելու վերաբերյալ) հետեւանքով է, որ ամբաստանյալը դատարան չի ներկայացվում: Ամբաստանյալի բացակայության պատճառով դատական նիստը հետաձգվեց, միջնորդության քննարկումը՝ եւս: Հաջորդ դատական նիստը կանցկացվի Գյումրիի նստավայրում, քանի որ Մարալիկի նստավայրն ապահովված չէ տեսակապի միջոցով դատական նիստ անցկացնելու հնարավորությամբ:

ԻՐԱՆԻՑ ԾԱՆՈՒՑՈՒՄ Է ՈՒՂԱՐԿՎԵԼ

**ArmLur.am-ին հասած տեղեկություններ համաձայն՝ Աժ նախկին պատգամավոր Խաչատուր Քոհոբելյանի հայրիկի առեւանգման գործով Իրանի Հանրապետությունից ծանուցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետություն:**

Մասնավորապես՝ նախկին պատգամավորի հայրիկի առեւանգման գործով Իրանի Հանրապետությունում կալանավորվել էին երկու անձ: Նրանց մասով Իրանում նախաքննությունն ավարտվել է, եւ գործը մտել է դատարան: Այս ամենի արդյունքում էլ Իրանի Հանրապետությունց նամակ- ծանուցում է ուղարկվել Աժ նախկին պատգամավորին՝խնդրելով ներկայանալ Իրանի Հանապետություն եւ մասնակցել իրենց հայրիկի առեւանգման գործով դատական նիստին: Ինչպես հայտնի է, այս տարվա հուլիսի 27-ի առավոտյան ոստիկանության Իջեւանի բաժնում հաղորդում է ստացվել, որ Տավուշի մարզի բնակիչ 83-ամյա Գրիշա Քոքոբելյանը անհետ կորել է: Նրան հայտնաբերելու միջոցառումներ են ձեռնարկել ոստիկանության մի շարք ստորաբաժանումների ծառայողներ: Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների միջոցառումներով տեղեկություններ են ստացվել, որ Գրիշա Քոքոբելյանը ոչ թե անհետ կորել է, այլ նրան առեւանգել են: Հանցագործությունը բացահայտելու եւ կատարողներին հայտնաբերելու միջոցառումների ընթացքում անհայտ անձը կապ է հաստատել Գրիշա Քոքոբելյանի հարազատների հետ եւ նրան անվնաս վերադարձնելու դիմաց գումար պահանջել: Որոշակի գումար ստանալուց հետո օգոստոսի 2-ին Գրիշա Քոքոբելյանին ազատ են արձակել: Քրեական ոստիկանության գլխավոր, Տավուշի մարզային վարչության եւ Իջեւանի բաժնի ծառայողների ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հանցագործությունը կազմակերպել եւ կատարել են Իջեւանի բնակիչներ, Աժ նախկին պատգամավոր 37-ամյա Սուրեն Մանուկյանը եւ եւս մեկ անձ: Նրանք ոստիկանության ծառայողների կողմից օգոստոսի 11-ին հայտնաբերվել, ձերբակալվել եւ այժմ գտնվում են կալանքի տակ: Աժ նախկին պատգամավորի հայրիկի առեւանգման գործով Իրանում եւս երկու քաղաքացի էին կալանավորվել, եւ ինչպես նկատում ենք, նրանց գործողությունների մասով նախաքննության ավարտ է հայտարարվել: Հավելենք, որ Սուրեն Մանուկյանը մինչ օրս չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ցավալի դեպք է եղել Վարդենիս քաղաքում: Սոթք գյուղի բնակիչ 58-ամյա Ազատուհի Հակոբյանը, տեղեկանալով, որ ամուսինը եւ փեսան զոհված են, հոկտեմբերի 26-ին՝ժ.18:00-ին, ինքնասպանություն է գործել՝ քրոջ տանը կից անասնագոմում կախվելով: Նշենք, որ կինը նախկինում եւս ինքնասպանության փորձ էր կատարել, սակայն հարազատները կարողացել էին փրկել նրա կյանքը: Հոկտեմբերի 2-ին գրել էինք, որ պատերազմի հետեւանքները շարունակում են ցավալի դեպքերի պատճառ դառնալ: ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ Վարդենիսում 58 տարեկան Ազատուհի Հ-ն տանը խմել է էսենցիա եւ տեղափոխվել հիվանդանոց: Նա փորձել է ինքնասպան լինել: Մեր բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նրա այդ քայլի պատճառը եղել է այն , որ տիկնոջ փեսաներից մեկը 44-օրյա պատերազմում զոհվել էր, իսկ, ահա, մյուս փեսան այս տարվա սեպտեմբերի 13-ին հակառակորդի հարձակման հետեւանքով է զոհվել: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին Վարդենիս քաղաքի բնակիչը, իմանալով որդու զոհվելու մասին, ինքնասպան էր եղել: Ի դեպ, որդուն դեռեւս չեն հայտնաբերել:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ՎՐԱԵՐԹԻ ԵՆԹԱՐԿՎԱԾԸ

Հոկտեմբերի 23-ին՝ժամը 16:40-ի սահմաններում, Տավուշի փոխմարզպետ, 41-ամյա Նարեկ Ղուշչյանը Տավուշի մարզպետարանի ծառայողական Nissan մակնիշի 550 LL 60 համարանիշի ավտոմեքենայով Երեւանի Ռուբինյանց փողոցում վրաերթի է ենթարկել 20-25 տարեկան մի երիտասարդի: Վարորդը փախուստի չի դիմել, օգնել է վրաերթի ենթարկվածին եւ իր ավտոմեքենայով տեղափոխել «Իզմիրլյան» բժշկական կենտրոն: Վրաերթի փաստով նախաձեռնվել է վարույթ: Ոչ աշխատանքային կիրակի օրը ծառայողական ավտոմեքենայով Երեւանում ծառայողական ի՞նչ գործ ուներ Տավուշի փոխմարզպետը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

## ԻՐԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Հոկտեմբերի 26-ին ոստիկանություն հաղորդում տված 48-ամյա կինը հայտնել է, որ հոկտեմբերի 24-ի ժամը 22.30-ի սահմաններում Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղում «Կիա» մակնիշի մեքենայի վարորդը մեքենան կայանելու հարցի շուրջ վիճաբանել է իր հետ, ապա մեքենայի պատուհանից ատրճանակից երկու կրակոց է արձակել անհայտ ուղղությամբ, ինչն ինքն ընկալել է իր դեմ ուղղված իրական սպառնալիք: Ոստիկանության Նաիրիի բաժնի ծառայողները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են 48-ամյա կնոջը սպառնացած եւ կրակոց արձակած վարորդի ինքնությունը:

30-ամյա տղամարդը Երեւանի Նաիրի Զարյան փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է Նաիրիի քննչական բաժին: Նա հայտնել է, որ նշված միջադեպի ժամանակ մոտը եղել է իր անվամբ հաշվառված 4,5 մմ տրամաչափի օդամղիչ ատրճանակ: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Նաիրիի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

# ՀՐԴԵՀԸ ՄԱՐԵԼ Է ԱՆՁՐԵՎԸ

Տավուշի մարզպետարանի ինտերներտային կայքը հայտնում է, որ Իջեւան քաղաքի Գյոկչի հանդամասում առաջացած հրդեհի մարման աշխատանքներին գործուն աջակցություն ցուցաբերելու համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հանձնվել է «Կանխարգելում, օգնություն, փրկություն» մեդալ: Ըստ ԱԻՆ ինտերնետային կայքի՝ 2022թ. օգոստոսի 31-ից մինչեւ սեպտեմբերի 6-ը տեւած հրդեհից Իջեանում այրվել է մոտ 13 հա անտառածածկ տարածք, կրակի մարմանը ներգրավվել են ՊՆ մեկ ուղղաթիռ, ԱԻՆ եւ Իջեւանի անտառտնտեսության տասնյակ աշխատողներ: Հրդեհը մարվեց, երբ տեւական ժամանակ ոչ անձրեւային եղանակից հետո Իջեւան քաղաքում անձրեւ տեղաց: Մեկ շաբաթ մոլեգնած հրդեհի մարման համար ինչեր է ձեռնարկել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր մարզպետ Հ. Ղալումյանը՝ ԱԻՆ ինտերնետային կայքը ոչինչ չի հայտնել:

# ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶ

Վերջերս համացանցում լուսանկարներ են տեղադրվել, որոնցում պատկերված է, թե ինչպես հայտնի Ռուստամ Ավագյանը Երկրապահ կամավորականների միության Տավուշի բաժանմունքի ղեկավար Վարդան Աթոյանի, լրագրող Թերեզա Ասատրյանի եւ այլոց հետ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի առաջնագիծ է գնացել: Լրագրող Նաիրի Հոխիկյանը 2022-ի մայիսի վերջին հաղորդում է ներկայացրել ՀՀ ԱԱԾ, ըստ որի՝ Ռուստամ Ավագյանը մայիսի սկզբին հրապարակային կերպով սեռական բնույթի հայհոյանքներ ու ատելություն է հնչեցրել Արցախի հայերի, Արցախի պետական խորհրդանիշների եւ ընդդիմադիր հայացքներ ունեցող անձանց հասցեին: Ռուստամ Ավագյանը նախկինում հայտարարել է՝ թե թող «մեր ու մանուկ թուրքի կողմից կոտորվեն, բայց Նիկոլը մնա վարչապետ»: Փաստական ապացույցների հիման վրա՝ ԱԱԾ-ում քրեական գործ է հարուցվել Ռուստամ Ավագյանի դեմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329 հոդվածի հատկանիշներով՝ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը: ԱԱԾ-ի կողմից քրեական գործ հարուցելուց հետո պարզվել է, որ Ռ. Ավագյանը 2020-ի նոյեմբերին կատարել է նույնատիպ հանցանք՝ կրկին ատելություն եւ հայհոյանք տարածելով Արցախի եւ այնտեղ բնակվող մեր հայրենակիցների հասցեին: Նույն հոդվածով այդ անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, նա ներգրավվել է որպես ամբաստանյալ, արդեն մոտ 2 տարի դատական գործընթաց է, Ռ. Ավագյանը ազատության մեջ է՝ չբացակայելու մասին ստորագրությամբ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՑԱՎԱԼԻ Է

# ԴԱՏ՝ ՀԱՐՅԵՐ ՑԱԼՈՒ ՀԱՄԱՐ

**«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է «Հանուն հանրապետության» կուսակցության նախագահ Արման Բաբաջանյանը:**

**-Պարոն Բաբաջանյան, մի քանի տարի տեւեց «Խոսրով Հարությունյանը՝ ընդդեմ Արման Բաբաջանյանի» դատական գործը: Նախորդ տարի հրապարավեց վճիռը, սակայն այն կարծես չի հանգուցալուծվել: Ինչո՞ւ:**

-Նախ՝ հարկ եմ համարում ներկայացնել պատմությունը. Ազգային ժողովի 2019թ. ապրիլի 18-ի լիագումար նիստում, օգտվելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի ընտրության ժամանակ իմ իրավունքից, հարց եմ ուղղել նախկին բազմաթիվ պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց՝ տարաբնույթ գերեկամտաբեր գործունեությամբ զբաղվելու արտոնագրեր շռայլելու եւ դրա հետեւանքների մասին, այդ թվում՝ հիշատակել եմ նաեւ Խոսրով Հարությունյանի անունը, քանի որ բազմաթիվ աղբյուրներից տեղեկություններ կան առ այն, որ վերջինս, տարբեր հանրային պաշտոններ զբաղեցնելով, ազատ ժամանակ շատ «էֆեկտիվ» բիզնեսմեն է, այդ թվում՝ ՀԷԿ-երի ոլորտում: Այս սուբյեկտը որոշեց ինձ դատի տալ: Ցավոք, այդ շրջանում ծայրահեղ ծանրաբեռնված լինելով քաղաքական եւ պատգամավորական գործունեությամբ՝ չեմ կարողացել պատշաճ կազմակերպել դատական պաշտպանությունս:

**-Եթե չեմ սխալվում, Դուք դժգոհ էիք Արշակ Պետրոսյանից, որը քննում էր այս գործը:**

-Այո, գործը քննել է շատերին հայտնի տխրահռչակ «դատավոր» Արշակ Պետրոսյանը, որը հայտնի է, օրինակ, Վարդգես Գասպարիին «Մարտի 1»-ի գործով դատապարտելով եւ այլ գործերով: Նա վճռել է՝ հերքում՝ Խոսրով Մելիքի Հարությունյանի վերաբերյալ.

«Հայցվոր Խոսրով Մելիքի Հարությունյանի հայցը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել պատասխանող Արման Շամիրի Բաբաջանյանին վճռի օրինական ուժ ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ Ազգային ժողովի առաջիկա նիստի ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առնվազն 1000 տպաքանակ ունեցող լրատվության միջոցում հերքել 18.04.2019թ. ՀՀ Ազգային ժողովի լիագումար նիստի ընթացքում Խոսրով Հարությունյանի հասցեին հրապարակված, իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալները՝ հերքման տեքստը սահմանելով հետեւյալ կերպ.

«Հերքում՝ Խոսրով Մելիքի Հարությունյանի վերաբերյալ» խորագրի ներքո հանդես գալ հետեւյալ բովանդակությամբ տեքստով. «18.04.2019թ. ՀՀ Ազգային ժողովի լիագումար նիստի ընթացքում ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածու Գարեգին Բաղրամյանին ուղղված հարցադրման ժամանակ Խոսրով Մելիքի Հարությունյանի վերաբերյալ հրապարակված փաստացի տվյալները՝ «…Ձեր պաշտոնավարման ընթացքում բազմաթիվ նախկին պաշտոնյաների, բարձրաստիճան պաշտոնյաներին, ... Ձեր հանձնաժողովը տվել է արտոնագիր ՀԷԿ-երի, ջրային ռեսուրսների կառավարման, եւ ակնհայտ է, որ այդ ոլորտներում բազմաթիվ օրինախախտումներ են տեղի ունեցել, թալան է տեղի ունեցել ...: Ընդհանրապես այդ պաշտոնյաները այ..., Խոսրով Հարությունյանը,... երբ որ Դուք լիցենզիա էիք տալիս հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ դրանք շարունակում են, ի դեպ, այսօր էլ այդ մարդկանց սեփականության տակ մնալ, ...», չեն համապատասխանում իրականությանը, որը հերքում եմ»:

Պատասխանող Արման Շամիրի Բաբաջանյանից հօգուտ հայցվոր Խոսրով Մելիքի Հարությունյանի բռնագանձել 400.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտելու միջոցով Խոսրով Մելիքի Հարությունյանի պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման գումար»:

**-Ձեր կարծիքով՝ որքանո՞վ այս վճիռը կարող է փոխել հանրային վերաբերմունքը Խոսրով Հարությունյանի նկատմամբ:**

-Հիմա Խոսրով Հարությունյանը ջանք չի խնայում հիշյալ դատական ակտի կատարման ուղղությամբ: Ինձ համար սա չափազանց հասկանալի է. երբ բացակայում է բովանդակությունը, գերակշռող է դառնում ձեւը, եւ հենց այս մոլեգին տոգորն է, որ երեւի պետք է, Խոսրով Հարությունյանի կարծիքով, վերականգնի իր «պատիվը», քանի որ հանրային-քաղաքական գործունեությամբ հեղինակություն վաստակելու հույս չունի:

Նախ՝ անհրաժեշտ եմ համարում վերահաստատել, որ կոնկրետ անձանց եւ նրանց՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության գործած «սխրանքների» կամ կապիտալի մոլեռանդ «վաստակման» մասին փաստերն ու իմ վերաբերմունքը չի կարող փոփոխվել դատավորի լիազորությունները դատավորի երդմանը հակառակ կիրառող մեկի ապօրինի որոշումներով, որոնք դեռ շարունակում է կայացնել, այդ թվում՝ իմ նկատմամբ, քանի որ, ցավոք, մեր նորածին ժողովրդավարությունը դեռ չի կարողացել կենտրոնացնել իր կամքը իրավական քաղաքականության ոլորտում եւ ազատել դատական իշխանությունը այս արատավոր տարրերից:

Միեւնույն ժամանակ, այս հնարավորությունն օգտագործելով, ցանկանում եմ անդրադառնալ Խոսրով Հարությունյանի «բարի համբավին» եւ «հեղինակությանը».Այս մարդու առաջին «պետականամետ» գործունեության մասին խոսում է իր «դանոսը» 1988-1990 թթ. ՀԽՍՀ դատախազ Վ. Նազարյանին եւ պարտիական մարմիններին 88-ի շարժման ակտիվիստների վերաբերյալ:

Երկրորդ անգամ նա աչքի է ընկնում որպես աշխարհում միակ եւ անկրկնելի վարչապետ, որը իր ղեկավարած կառավարության, իր կողմից ներկայացված ծրագրին դեմ էր:

Մեր պետության համար կարեւորագույն նշանակություն ունի նրա մասնակցությունը 1998-ի հեղաշրջմանը, երբ Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց, ՀՀ նախագահի լիազորությունները պետք է ստանձներ ՀՀ ԱԺ նախագահը, բայց Բաբկեն Արարքցյանը նույնպես հրաժարական էր տվել: Եվ սա հենց այն մարդն էր, որ ստանձնի ՀՀ ԱԺ նախագահի պաշտոնը, որպեսզի ՀՀ նախագահի լիազորություններից հրաժարվի հօգուտ Ռոբերտ Քոչարյանի: Հենց այս սխեմայի, այս իր քաղաքական կամակատարի միջոցով ամբողջ իշխանությունը Ռոբերտ Քոչարյանը կենտրոնացրեց իր ձեռքում:

Երրորդ՝ հիվանդանոցի, հայաստանցիներին կարտոֆիլով յուլա գնալու խորհրդի եւ ունեցվածքի մասին ես չեմ մանրամասնում, քանի որ շատերին են հայտնի իր՝ հանրային պաշտոնյայի աշխատավարձին չհամապատասխանող ունեցվածքի մասին եւ դրա վերաբերյալ իր այն բացատրությունները, որ պաշտոնատար անձ չհանդիսանալու ժամանակահատվածում «արդյունավետ» գործարարությամբ է զբաղվել (թերեւս համոզմունք ունեմ, որ հենց ի պաշտոնե մատուցած ծառայությունների եւ ձեռք բերած կապերի արդյունավետ օգտագործման արդյունքում):

Կարեւոր է նաեւ հիշատակել նրա՝ իբրեւ նախկին վարչապետի եւ եւս 3-ի անձնական երաշխավորությունը Ռոբերտ Քոչարյանին կալանքից ազատելու համար: Այստեղ նա փորձում էր հանդես գալ որպես հանրության մեջ հեղինակություն ունեցող մեկը: Այս մոլորությունը հեշտությամբ ցրեց «Մարտի 1»-ի գործով տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Տիգրան Եգորյանը՝ դատական նիստում մերկացնելով նրա իրական էությունը: Ահա այսպիսի կենսագրությամբ անձինք, որոնք հաշտ են եղել Հայաստանի պետականության, ժողովրդավարության եւ ինքնիշխանության կազմաքանդման հետ, այժմ փորձում են իրենց «վերածնունդն» ապահովել՝ հմտորեն օգտվելով հենց այդ ժամանակներում ձեւավորված կոռումպացված, մարդկանց ունեզրկող, իշխանական խմբակի շահեր սպասարկող, խաղաղ հավաքների մասնակցության համար մարդկանց գնդակահարող իշխանության հետ հանցակից դատական համակարգից:

*Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ*

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ճՏՊ. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵՑ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 27-ի նիստում վերաբաշխում կատարեց 2022-ի բյուջեի մասին օրենքում, որը վերաբերում է Հայաստանում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրով ֆինանսական միջոցներ տրամադրելուն: Որոշման հիմնավորման մեջ նշված է, որ աշխարհաքաղաքական իրադրությունն աշխարհում հանգեցնում է պարենի պակասի եւ գների աճի: Հայաստանը ներմուծվող գրեթե բոլոր ապրանքների առումով սերտորեն կապված է ռուսական շուկային: ՀՀ արտաքին եւ փոխադարձ առեւտրի կառուցվածքում ՌԴ մասնաբաժինը 2021-ին կազմել է՝ արտահանում՝ 28%, եւ ներմուծում՝ 37.2%, Պարենային ապրանքներից Հայաստանը ՌԴ-ից ներմուծում է ցորենի 99%-ը, եգիպտացորենի 80%-ը: Ծրագրով նախատեսվում է ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի եւ Արարատի մարզերի, մինչեւ 100 հա մակերեսով ցորենի ցանքատարածություններ մշակող գյուղացիական տնտեսություններին մասնակի (շուրջ 50%) փոխհատուցել աշնանացան ցորենի մշակության ծախսերը, մասնավորապես՝ հավաստագրված սերմերով ցանքի դեպքում կփոխհատուցվի սերմի, պարարտանյութի եւ դիզելային վառելիքի ձեռքբերման գնահատված ծախսերը, իսկ չհավաստագրված սերմերի դեպքում՝միայն պարարտանյութի եւ դիզելային վառելիքի: Փոխհատուցման գործընթացը կիրականացնեն համայնքները՝ մինչեւ սույն թվականի սեպտեմբերի 15-ը էկոնոմիկայի նախարարության հետ կնքված պայմանագրերի հիման վրա: 1 հա-ի հաշվով հավաստագրված, էլիտային կամ 1-ին վերարտադրության սերմերով ցանքի դեպքում կփոխհատուցվի 120 հազար դրամ, իսկ չհավաստագրված սերմերով ցանքի դեպքում՝ 70 հազար դրամ՝գնահատված ծախսերի շուրջ 50 տոկոսը: Հաշվարկը կատարվել է հեկտարի հաշվով 300 կգ սերմացուի, 250 կգ ազոտական պարարտանյութի եւ շուրջ 70լ դիզելային վառելանյութի չափաքանակներով: 2022 թվականին ծրագրով նախատեսվում է տրամադրել փոխհատուցում 27,500 հեկտար հողատարածքում աշնանացան ցորենի ցանք կատարելու համար, մասնավորապես՝ 10,000 հեկտար հավաստագրված սերմերով ցանքի դիմաց՝ 1,2 մլրդ դրամ, իսկ չհավաստագրված սերմերով 17,500 հեկտար ցանքի դիմաց 1,225 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ, փոխհատուցման գումարը 2022 թվականին կկազմի 2,425 մլրդ դրամ: Ծրագրի բյուջեն 2022 թվականին կկազմի 2 մլրդ 497 մլն 750 հազար դրամ: Նախագծի ընդունման արդյունքում աշնանացան ցորենի 1 հա-ի մշակության ծախսերի, մասնավորապես՝ սերմի, պարարտանյութի, դիզելային վառելիքի ձեռք բերման ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով կավելանան 27,500 հա-ով աշնանացան ցորենի ցանքատարածությունները, ինչպես նաեւ տեղական արտադրության ցորենի ծավալները եւ տնտեսավարող սուբյեկտների եկամուտները, կապահովվի ցորենի ֆիզիկական եւ տնտեսական մատչելիությունը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

# ՈՉ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐ

**Կառավարության որոշմամբ՝ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 797-Ն որոշման մեջ:**

Կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության ծրագրի շարունակության ապահովմամբ, ինչպես նաեւ ծրագրի արդյունավետության բարձրացմամբ: Նախագծով առաջարկվում է հստակեցնել ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում ընդգրկված, սեյսմիկ տեսանկյունից առավել վտանգավոր առկա դպրոցների ցանկը՝ հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի եւ այլ գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ արդեն իսկ կառուցված, վերակառուցված կամ հիմնանորոգված դպրոցները, ինչպես նաեւ հստակեցնել ծրագրում ընդգրկվող դպրոցները, համայնքները եւ բնակավայրերը՝ հաշվի առնելով համայնքների միավորման գործընթացը: Այդ կապակցությամբ նախագծի առանձին հավելվածով ներկայացվել են այն դպրոցները, որոնք արդեն իսկ կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել են կամ գտնվում են շինարարական աշխատանքների ընթացքում՝ ՀՀ պետական բյուջեի, Ասիական զարգացման բանկի եւ Համաշխարհային բանկի միջոցների հաշվին: Փոփոխությունը պայմանավորված է ԱԶԲ-ի կողմից ներկայացված առաջարկով: Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում ընդգրկված դպրոցների թիվը 368 է, ընդ որում՝ դպրոցների հստակեցման արդյունքում գործող որոշմամբ ներակայացված են դպրոցներ, որոնք այժմ չենք գործում, այդ իսկ պատճառով 437 դպրոցի եւ տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին իրականացված եւ իրականացվող կառուցվող կամ հիմնանորոգվող դպրոցների թվի տարբերությունը չի համապատասխանում: Հաշվի առնելով, որ 2015 -2022 թվականներին իրականացվել են շուրջ 63 դպրոցների կառուցման, վերակառուցման ու հիմնանորոգման աշխատանքներ, ընդ որում՝ որոշները դեռեւս ընթացքի մեջ են՝ հետագա 8 տարում շուրջ 305 դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման կանխատեսումը գնահատվում է ոչ իրատեսական: Այդ կապակցությամբ առաջարկվում է ծրագրի իրագործման ժամկետն ավելացնել 5 տարով՝ մինչեւ 2035 թվական: Նշված առաջարկության համար հիմք են հանդիսանում նաեւ ֆինանսական գնահատականները: Մասնավորապես, վերոհիշյալ 63 դպրոցների շինարարության աշխատանքների արժեքը կազմել է 71,765 մլրդ դրամ կամ շուրջ 159,5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ծրագրում ընդգրկվող 368 դպրոցների կառուցման կամ վերակառուցման արժեքը՝ ըստ խոշորացած հաշվարկների եւ հիմք ընդունելով ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում կառուցվող դպրոցների նախահաշվային արժեքները՝ շուրջ 1,678 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2022-30 թվականներին անհրաժեշտ կլինի 1,519 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ կապակցությամբ առաջարկվում է ծրագրի գործողության ժամկետը երկարացնել մինչեւ 2035 թվական: Հաշվի է առնվել նաեւ մինչեւ 2026 թվականը ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող եւս 15 դպրոցների /46-ի շրջանակներում/ շինարարության արժեքները՝ շուրջ 63,7 մլն ԱՄՆ դոլար:

Թեմայի շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է մինչեւ 2026 թվականը դպրոցների եւ մանկապարտեզների կառուցման եւ վերակառուցման պլանը եւ հավելել է, որ այս ցանկում ներառված են նաեւ սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով նախատեսված դպրոցները. «2023 թվականի հունվարի 1-ին մենք նախատեսում ենք շահագործման հանձնած լինել 24 դպրոց, 53 մանկապարտեզ, 2024 թվականի հունվարի 1-ին՝ 64 դպրոց, 141 մանկապարտեզ, 2025 թվականի հունվարի 1-ին՝ 57 դպրոց, 144 մանկապարտեզ, 2026 թվականի հունվարի 1-ին՝ 111 դպրոց, 87 մանկապարտեզ, 2026 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 78 դպրոց, 92 մանկապարտեզ. ընդհանուր՝ 337 դպրոց, 521 մանկապարտեզ»:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Նորք, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 25 հասցեում գտնվող 329,1 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 82,2 ք.մ. ավտոտնակ եւ 0.0576 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 113400000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 14.11.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւյուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝30.12.2022թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՓԱՌԱՏՈՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԷՐ ՉԱՐԵՆՑԻՆ

**Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսում Հայաստանի տաղավարը նվիրված էր Եղիշե Չարենցին: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանը 2022 թվականի հոկտեմբերի 19-23-ը առանձին տաղավարով մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին:**

Հայաստանի տաղավարն այս տարի նվիրված էր Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին: Ֆրանկֆուրտի ցուցահանդես-տոնավաճառն իր տեսակի մեջ միջազգային ամենամեծ գրքի հարթակն է, որին Հայաստանը մասնակցում է ավելի քան քսան տարի: Միջոցառմանն այս տարի ներկայացել էին աշխարհի 100 երկրներից ավելի քան 7 հազար մասնակիցներ: Այն հրաշալի առիթ էր հերթական անգամ ցուցադրելու, հանրահռչակելու Հայաստանում եւ արտերկրում հրատարակված օտարալեզու հայ գրականությունն ու մշակութային գրավոր ժառանգությունը:

Այս հարթակում ազգային տաղավար ունենալը կարեւոր է նաեւ հայաստանյան գրական գործակալների եւ հրատարակիչների հանդիպումները, պայմանավորվածությունները, հետագա ծրագրերը կյանքի կոչելու առումով: Հայաստանի տաղավարում, ինչպես նաեւ մյուս ազգային տաղավարներում օտարերկրյա հրատարակչությունների ներկայացուցիչներին միջոցառման բոլոր օրերին ընթացքում ներկայացվել է «Հայ գրականությունը՝ թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը: Նախարարությունն այս ծրագրով աջակցում է արտերկրի այն հրատարակչություններին, որոնք ցանկանում են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ դասական եւ ժամանակակից գրականություն: Այն նպատակ ունի ճանաչելի դարձնել հայ գրականությունը միջազգային հարթակներում: Վերոնշյալ ծրագրի շրջանակում վերջին 4 տարում արտերկրում լույս է տեսել (նաեւ ընթացքում է) 67 գիրք՝ ավելի քան 20 լեզուներով:

Այս անգամ ձեռք բերված պայմանավորվածությունները եւս ինարավորություն կտան ընդլայնելու թարգմանական ծրագրի աշխարհագրությունը: Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին Հայաստանի մասնակցության նպատակներն են գրատարածման բնագավառում միջազգային համագործակցությունը, արտերկրում հայ գրականության հանրահռչակումը, գրական դաշտի բոլոր օղակների զարգացումը: Այսպիսով, այն գրական արտադրանքի միջոցով նպաստելու է նաեւ գրական-մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանը եւ տարածմանը, ինչպես նաեւ հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման եւ զարգացման համար պայմանների ստեղծմանը:

Նշենք, որ հայկական պատվիրակության կազմում էին «Արի», «Առաջին» գրական գործակալությունները, «Անտարես», «Բուկինիստ», «Նյումեգ», «ԵՊՀ», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», «Վերնատուն» հրատարակչությունները եւ «Զանգակ» գրատունը:

ԹԱՏՐՈՆ

# ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳՉՈՒՀՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի Հասմիկ Թորոսյանը Լեյլայի դերն է կերտել ականավոր ֆրանսիացի կոմպոզիտոր Ժորժ Բիզեի «Մարգարիտ որոնողը» օպերայում, որի առաջնախաղը տեղի է ունեցել հոկտեմբերի 25-ին Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսի հեղինակավոր Կոլոն թատրոնում:**

Այս մասին ասվում է Արգենտինայում Հայաստանի դեսպանության տարածած հաղորդագրության մեջ:

Հասմիկ Թորոսյանից զատ, օպերային ներկայացման մեջ ընդգրկված են եղել Ֆերնանդո Ռադոն, Դմիտրի Կորչակը եւ այլք: Ներկայացման ռեժիսորը Միխայիլ Ջնանեցկին է, երաժշտական ռեժիսորը՝ Ռամոն Տեբարան:

«Մարգարիտ որոնողները» (Les pUcheurs de perles) երեք գործողությամբ օպերան Բիզեի առաջին օպերաներից է: Ֆրանսերեն լիբրետտոն՝ Էժեն Կորմոնի եւ Միշել Կարեի: Առաջնախաղը կայացել է 1863 թվականի սեպտեմբերի 30-ին Փարիզի «Լիրիկ» թատրոնում:

«Մարգարիտ որոնողները» համարվում է Բիզեի լավագույն ստեղծագործություններից մեկը եւ հաճախ բեմադրվում է հեղինակավոր օպերային թատրոններում: Գոյություն ունեն նաեւ օպերայի մի քանի ձայնագրություններ: Օպերայի դրվագներից հատկապես հայտնի է Au fond du temple saint զուգերգը:

ԼՈՒՐԵՐ

## ԱՆԴՐԱԴԱՐՁ

Երգչուհի Հռիփսիմե Հակոբյանը, որը մշտապես հայտնվում է հանրության քննադատության կիզակետում, այս անգամ որոշել է հրապարակայնորեն անդրադառնալ իր արտաքինը քննադատող օգտատերերին: Ավելին՝ ArmLur.am-ը նկատեց, որ երգչուհին «Ինստագրամ»-ի «սթորի» բաժնում տեղադրել է լուսանկարներ եւ գրառումներ կատարել: Ակնհայտ է, որ Հռիփսիմեն բավականին ընկճվել եւ զայրացել է իր հասցեին քննադատություններից:

*ԼԻԴԱ ԵԴԻԱԶԱՐՅԱՆ*

## ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՍՈԲՉԱԿԻՆ

Հեռուստահաղորդավարուհի Լերա Կուդրյավցեւան Telegram-ի իր ալիքում մեկնաբանել է Քսենյա Սոբչակի շուրջ ստեղծված իրավիճակը. հաղորդավարուհին ընդգրկված է «Ռոստեկ»-ի ղեկավար Սերգեյ Չեմեզովից 11 միլիոն ռուբլի շորթելու վերաբերյալ գործում: Կուդրյավցեւան հրապարակել է տեսանյութից մի հատված, որում Նիկա Բելոցերկովսկայան Սոբչակի համար «Տարո» քարտերով գուշակություն է անում: Բլոգերը պնդում է, որ լրագրողը պետք է զգուշանա մեծ ներդրումից: Տեսանյութի վերջում Բելոցերկովսկայան զգուշացնում է Սոբչակին, որ ինքը «օրենքի հետ խնդիրներ կունենա»: «Մենք չենք անհանգստանում, Քսենիա Անատոլեւնան կղեկավարի ամեն ինչ: Քարտերը չեն ստում», - իր անձնական բլոգում գրել է Կուդրյավցեւան: Հոկտեմբերի 26-ին հաղորդվել էր, որ Սոսկվայի Տվերսկոյի դատարանը մինչեւ դեկտեմբերի 24-ը կալանավորված կպահի Քսենիա Սոբչակի կոմերցիոն տնօրեն Կիրիլ Սուխանովին եւ Tatler-ի նախկին գլխավոր խմբագիր Արիան Ռոմանովսկուն: Հեռուստահաղորդավարը, ըստ լրատվամիջոցների, Ռուսաստանից մեկնել է Լիտվա:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌՄԲԱՐԿՈՒՆ

Չեմպիոնների լիգայի խմբային փուլի նախավերջին տուրի արտագնա խաղում Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնայի» նկատմամբ 3:0 հաշվով հաղթանակից հետո Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» հոլանդացի պաշտպան Մատեյս Դե Լիգտը բարձր է գնահատել գերմանական ակումբից կատալոնական թիմ տեղափոխված լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկու ղրակները:

«Շատ բարդ էր Լեւանդովսկու դեմ խաղալը: Ես կարծում եմ նա աշխարհի լավագույն ռմբարկուն է: Նրա դեմ միշտ պետք է շատ ուշադիր եւ զգոն լինել: Նա շատ մտածված է գործում, բայց մենք համատեղ ուժերով կարողացանք զրկել Լեւանդովսկուն գոլ խփելու հնարավորությունից»,- Դե Լիգտի խոսքը մեջբերում է ՈւԵՖԱ-ի մամուլի ծառայությունը: «Բավարիան» 5-րդ հաղթանակը տարավ խմբային փուլում եւ 15 միավորով C խմբի առաջատարն է: Գերմանացի Յուլիան Նագելսմանի գլխավորած թիմը դեռ նախորդ տուրում էր ապահովել 1/8 եզրափակիչի ուղեգիրը: Երկրորդ տեղն ու մյուս ուղեգիրը ապահովել է Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերը»: «Բարսելոնան» պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆում:

● *Հոկտեմբերի 28-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ովքե՞ր են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք:**

*Մարինե Թադեւոսյան (32 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ ռեզիդենտ ֆիզիկական անձինք) են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 եւ ավելի օր:

Ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում նաեւ՝

1) այն ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Սույն կետի կիրառության իմաստով կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են ֆիզիկական անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը,

2) Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող, ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Սույն հոդվածի կիրառության իմաստով Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ամբողջական օրեր են համարվում նաեւ Հայաստանի Հանրապետություն ժամանելու եւ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու օրերը՝ անկախ այդ օրերի ընթացքում ֆիզիկական անձի՝Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ժամերի քանակից:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ո՞վ է համարվում հոգեզավակ եւ ի՞նչ իրավունքներ ունի:**

*Պատվական Հայրապետյան (48 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հոգեզավակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխան է, որի խնամքը եւ դաստիարակությունը կազմակերպվում են խնամատար ընտանիքում:

Արգելվում է եղբայրների եւ քույրերի խնամքը եւ դաստիարակությունը տարբեր խնամատար ընտանիքներում կազմակերպելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է նրանց կամ նրանցից մեկի շահերից:

Հոգեզավակը պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի, բնակելի տարածության սեփականության օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝բնակելի տարածություն ստանալու իրավունքը: Հոգեզավակը պահպանում է նաեւ սույն օրենսգրքի 42-44-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները:

Հոգեզավակի ալիմենտի համար վճարները եւ կենսաթոշակը տնօրինում է խնամատար ծնողը՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Խնամատար ծնողը գումարի ծախսման մասին վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից հարցում ստանալու դեպքում այդ մասին տալիս է համապատասխան տեղեկատվություն:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Խնամատար ծնողի եւ հոգեզավակի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս եւ 50 տարուց ոչ ավելի, իսկ երեխային խնամատարության հանձնելու պահին խնամատար ծնողներից յուրաքանչյուրի տարիքը չի կարող գերազանցել 55 տարին:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը վերցված է համացանցից*



Ազատ ոճի ըմբիշ, Մ23 տարեկանների աշխարհի կրկնակի չեմպիոն, Եվրոպայի կրկնակի չեմպիոն, աշխարհի կրկնակի բրոնզե մեդալակիր Արսեն Հարությունյանը երեկ ամուսնացել է:

Երիտասարդ ըմբիշի հարսանեկան արարողությունը նախատեսված էր սեպտեմբերի 28-ին, սակայն երկրում տիրող պատերազմական իրավիճակից ելնելով՝ այն հետաձգվել էր:


## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:





*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

✂

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*



Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.10.2022**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: